ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/82

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից 24.08.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/82 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 24.08.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար պատվաստանյութի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրն առաջին չափաբաժնի մասով չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ

հոդվածի 7-րդ մասի համաձայն, գնահատող հանձնաժողովը որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ պետք է առաջադրի հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 5-7-րդ մասերը:

Ընկերությունը բողոքով խնդրել է Ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Ագաստ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Ագաստ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը գրավոր դիմել է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ պահանջով ներկայացնել 1-ին տեղ զբացեղրած մասնակցի որակավորման փաստաթղթերը, սակայն դեռ չի ստացել:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը 30.08.2018թ. ներկայացրել է գրությամբ ներկայացրել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի և հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի միջև առկա անհամապատասխանությունները.

ՀՀ	Պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագիրը	Ընտրված մասնակցի կողմից ներկայացված «Ագրովետ» ՍՊԸ-ի արտադրության պատվաստանյութի տեխնիկական բնութագիրը համաձայն օգտագործման հրահանգի՝ գրանցված Ռուսաստանի Դաշնության անասնաբուժության և բուսասանիտարիայի հսկողության դաշնային ծառայության կողմից	Անհամապատասխանությունների նկարագիրը
1	Pasterella multocida շտամ	Pasterella multocida շտամ և "Каломенский" շտամ	Առկա է "Каломенский" շտամ, որը սահմանված չէ Պատվիրատուի կողմից պահանջված տեխնիկական բնութագրում:

2	Խառնված Montanide ISA 70 կամ 206 յուղի հավելանյութով	Խառնված միներալ յուղով 40+/-2% և անջուր լինոլին 10+/-2%	ա) Խառնուրդում ներառված յուղերը չեն համապատասխանում պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրին: բ) Մասնակցի կողմից ներկայացվել է միներալ յուղ 40+/-2%, մինչդեռ սահմանված տեխնիկական բնութագրում նշված է Montanide ISA 70 կամ 206 գ) Մասնակցի կողմից ներկայացվել է անջուր լինոլին 10+/-2%, մինչդեռ սահմանված տեխնիկական բնութագրում նշված է Montanide ISA 70 կամ 206 դ) Պատվիրատուն հստակ սահմանել է մեկ յուղի առկայություն՝ Montanide ISA 70 կամ Montanide ISA 206 յուղի հավելանյութ, իսկ ներկայացված ապրանքում առկա են 2 տարբեր յուղեր:
3	Պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը պետք է լինի +2 - +15^0 C.	Պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը +2 - +8^0 C.	անհամապատասխանություն

Ընկերությունը կից ներկայացրել է «Ագրովետ» ՍՊԸ-ի արտադրության խոշոր եղջերավոր կենդանիների պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված պատվաստանյութի օգտագործման հրահանգը՝ գրանցված Ռուսաստանի Դաշնության անասնաբուժության և բուսասանիտարիայի հսկողության դաշնային ծառայության կողմից:

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր

ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով և ի լրումն բողոքի ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հստակեցրել բողոքով ներկայացված պահանջը՝ վերաձևակերպելով հետևյալ կերպ. չեղարկել ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի որոշումը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով և որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Ագաստ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին:

2. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 28.08.2018թ. թիվ ՄՄ/7206-18 գրությամբ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸի բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի (այսուհետ՝ կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապրանքների գնման դեպքում նաև կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

«ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 1-ին չափաբաժնով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Ա/Ձ Կարեն Հայրյանին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերով սահմանված ժամկետում

ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ընթացակարգի հրավերով սահմանված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Ա/Ձ Կարեն Հայրյանը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգը գնահատող հանձնաժողովն ուսումնասիրել է Ա/Ձ Կարեն Հայրյանի կողմից ներկայացված փաստաթղթերը և անհամապատասխանություն չհայտնաբերելով՝ վերջինիս ճանաչել է ընտրված մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի 2-րդ կետում նշված է, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը, մասնավորապես առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին, մինչդեռ 3-րդ կետում նշված է, որ վերջինս գրավոր դիմել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման փաստաթղթերի տրամադրման պահանջով և բողոքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելու օրվա և ժամի դրությամբ փաստաթղթերը չի ստացել:

Վերը նշված հանգամանքից կարելի է եզրահանգել, որ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից սույն բողոքով փորձ է արվում խաթարել Ընթացակարգի բնականոն ընթացքն, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել Ընթացակարգով նախատեսված պատվաստանյութի ձեռքբերման ժամկետների հետաձգմանը:

Ինչ վերաբերվում է «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից բողոքի 3-րդ կետում նշված հանգամանքին, ապա հարկ է նշել, որ վերջինս 2018 թվականի օգոստոսի 22-ին էլեկտրոնային փոստի միջոցով դիմել է Ընթացակարգի քարտուղարին՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման փաստաթղթերի տրամադրման պահանջով: Ընթացակարգի քարտուղարը պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային փոստի միջոցով 2018 թվականի օգոստոսի 24-ին «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին է տրամադրել, պահպանելով օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետը:

Պատվիրատուն միաժամանակ հայտնել է, որ վերը նշված պատվաստանյութի գնման գործընթացը 2018 թվականին երկու անգամ չկայացած է հայտարարվել պայմանագիր չկնքվելու հիմքով:

Հաշվի առնելով նշված հանգամանքը և ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից 2018 թվականի օգոստոսի 9-ին ստացված N Ե/10605 գրությունը՝ առ այն, որ հանրապետությունում պարբերաբար գրանցվում է պաստերելյոզ հիվանդության դեպքեր և ելնելով այն հանգամանքից, որ վերոնշյալ հիվանդության դեմ կանխարգելիչ միջոցառումները սահմանված ժամկետում չիրականացնելը բարձրացնում է հանրապետությունում այդ հիվանդության բռնկման և տարածման վտանգը, Պատվիրատուն խնդրել է հիմք ընդունելով Օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը թույլատրել շարունակել գնման գործընթացը:

Ի լրումն բողոքի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 06.09.2018թ. թիվ ՄՄ/17398-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի 1-ին կետում ընտրված մասնակցի կողմից ներկայացված «Агровет» ՍՊԸ-ի արտադրության պատվաստանյութի տեխնիկական բնութագրում նշված «Каломенский» շտամը լիովին համապատասխանում է պաստերելլա խմբի միկրոօրգանիզմներին (Pasteurella multocida հարուցիչից ստացված շտամն է), որը վերցվել է ՌԴ Կոլոմենսկի շրջանից, որտեղ հաճախ նկատվել են պաստերելյոզի բռնկումներ և լրացուցիչ շտամի առկայությունը ոչնչով չի ազդում «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով սահմանված պատվաստանյութի որակական հատկանիշների վրա:

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի 2-րդ կետում նշված է, որ ընտրված մասնակցի կողմից ներկայացված խառնուրդը չի համապատասխանում Պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրին, սակայն Պատվիրատուն նշել է, որ 2 խառնուրդներն էլ իրենցից ներկայացնում են հանքային յուղով հիմքեր (ադյուվանտներ), որոնք բարձրացնում են պատվաստանյութի արդյունավետությունն ու իմունածնությունը և ապահովում են պատվաստանյութի կայունությունը:

Հարկ է նշել նաև, որ և լանոլինը, և Montanide ISA 70 կամ 206 յուղի հավելանյութերը միջազգայնորեն ընդունված նյութեր են, օժտված բացասական ռեակտոգեն հատկություններով և նվազեցնում են պատվաստանյութի անցանելիությունը:

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի 3-րդ կետում, ընտրված մասնակցի կողմից ներկայացված պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը +2 - +8 °C նշված է որպես անհամապասխանություն: Սակայն, հարկ է նշել, որ «Ագրովետ» ՍՊԸ-ի կայքում տեղադրված տեղեկատվության համաձայն, վերոգրյալ պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը նշված է +2 - + 15 °C (https://www.vidal.ru/veterinar/vaccine-27917:

Ուստի, նշված կետով բերված փաստարկը, որպես անհամապատասխանություն դիտարկելը ճիշտ չէ, քանի որ +8 °C ջերմաստիճանը գտնվում է հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված +2 - + 15 °C ջերմաստիճանի միջակայքում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումն, ինչպես նաև միջնորդել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ ընթացակարգի կասեցումը վերացնելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերոհիշյալ միջնորդությունը մերժվել է, քանի որ բողոքաբերի կողմից երեք պարամետրերով բողոքարկվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը և հաշվի առնելով գնման առարկայի կարևորությունը, գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտել է, որ Ընթացակարգի կասեցումը անհրաժեշտ է պահպանել, մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

1	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	Խոշոր եղջերավոր կենդանիների (Pasterella multocida շտամի) պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված, պատվաստանյութ, խառնված Montanide ISA 70 կամ 206 յուղի հավելանյութով: Արտաքին տեսքից իրենից ներկայացնում է սպիտակ գույնի միասեռ էմուլսիա: Պահպանման ընթացքում էմուլսիան կարող է շերտավորվել, որը թափահարելուց հեշտությամբ վերականգնվում է: Արտադրվում է ստերիլ ապակյա սրվակներում, ամուր փակված է ռետինե խցաններով և մետաղյա կափարիչներով: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սերիայի և վերահսկիչի համարները, պատրաստման և պիտանելիության ժամկետները: Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի արտադրման օրվանից ոչ պակաս 10 ամիս: Պատվաստանյութով սրվակները պետք է լինեն 50, 100 մլ (1 ներարկման դոզան=3մլ) տարողությամբ: Պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը պետք է լինի +2 - +15^0 C: Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա նշված լինի «պետական պատվեր» բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում: Պաստվաստանյութը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժության մեջ օգտագործվող դեղամիջոցների ներմուծմանն և փոխադրմանը ներկայացվող պահանջներին:

3. Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված Ա/Ձ Կարեն Հայրյանի կողմից ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

1	Խոշոր եղջերավոր կենդանիների պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված պատվաստանյութ	Ագրովետ	Ռուսաստան	Խոշոր եղջերավոր կենդանիների (Pasterella multocida շտամի) պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված, պատվաստանյութ, խառնված Montanide ISA 70 կամ 206 յուղի հավելանյութով: Արտաքին տեսքից իրենից ներկայացնում է սպիտակ գույնի միասեռ էմուլսիա: Պահպանման ընթացքում էմուլսիան կարող է շերտավորվել, որը

				թափահարելուց հեշտությամբ վերականգնվում է: Արտադրվում է ստերիլ ապակյա սրվակներում, ամուր փակված է ռետինե խցաններով և մետաղյա կափարիչներով: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սերիայի և վերահսկիչի համարները, պատրաստման և պիտանելիության ժամկետները: Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի արտադրման օրվանից ոչ պակաս 10 ամիս: Պատվաստանյութով սրվակները պետք է լինեն 50, 100 մլ (1 ներարկման դոզան=3մլ) տարողությամբ: Պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը պետք է լինի +2 - +15^0 C: Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա նշված լինի «պետական պատվեր» բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում: Պաստվաստանյութը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժության մեջ օգտագործվող դեղամիջոցների ներմուծմանն և փոխադրմանը ներկայացվող պահանջներին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Կարեն Հայրյանը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի 24.08.2018թ. բողոքը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 28.08.2018թ. թիվ ՄՄ/7206-18 և 06.09.2018թ. թիվ ՄՄ/17398-18 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որի 1-ին չափաբաժնի մասով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

1	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	Խոշոր եղջերավոր կենդանիների (Pasterella multocida շտամի) պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված, պատվաստանյութ, խառնված Montanide ISA 70 կամ 206 յուղի հավելանյութով: Արտաքին տեսքից իրենից ներկայացնում է սպիտակ գույնի միասեռ էմուլսիա: Պահպանման ընթացքում էմուլսիան կարող է շերտավորվել, որը թափահարելուց հեշտությամբ վերականգնվում է: Արտադրվում է ստերիլ ապակյա սրվակներում, ամուր փակված է ռետինե խցաններով և մետաղյա կափարիչներով: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սերիայի և վերահսկիչի համարները, պատրաստման և պիտանելիության ժամկետները: Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի արտադրման օրվանից ոչ պակաս 10 ամիս: Պատվաստանյութով սրվակները պետք է լինեն 50, 100 մլ (1 ներարկման դոզան=3մլ) տարողությամբ: Պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը պետք է լինի +2 - +15^0 C: Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա նշված լինի «պետական պատվեր» բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում: Պաստվաստանյութը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժության մեջ օգտագործվող դեղամիջոցների ներմուծմանն և փոխադրմանը ներկայացվող պահանջներին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Ա/Ձ Կարեն Հայրյանը, ով հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.08.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.7.1 կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Կարեն

Հայրյանը, ում ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում՝ ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ա/Ձ Կարեն Հայրյանի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

1	Խոշոր եղջերավոր կենդանիների պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված պատվաստանյութ	Ագրովետ	Ռուսաստան	Խոշոր եղջերավոր կենդանիների (Pasterella multocida շտամի) պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված, պատվաստանյութ, խառնված Montanide ISA 70 կամ 206 յուղի հավելանյութով: Արտաքին տեսքից իրենից ներկայացնում է սպիտակ գույնի միասեռ էմուլսիա: Պահպանման ընթացքում էմուլսիան կարող է շերտավորվել, որը թափահարելուց հեշտությամբ վերականգնվում է: Արտադրվում է ստերիլ ապակյա սրվակներում, ամուր փակված է ռետինե խցաններով և մետաղյա կափարիչներով: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սերիայի և վերահսկիչի համարները, պատրաստման և պիտանելիության ժամկետները: Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի արտադրման օրվանից ոչ պակաս 10 ամիս: Պատվաստանյութով սրվակները պետք է լինեն 50, 100 մլ (1 ներարկման դոզան=3մլ) տարողությամբ: Պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը պետք է լինի +2 - +15^0 C: Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա նշված լինի «պետական պատվեր» բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում: Պաստվաստանյութը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժության մեջ օգտագործվող դեղամիջոցների ներմուծմանն և փոխադրմանը ներկայացվող պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Ա/Ձ Կարեն Հայրյանի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատելով բավարար, 22.08.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ վերջինիս ճանաչել է ընտրված մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնանշման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև Ա/Ձ Կարեն Հայրյանի (այսուհետ՝ Մասնակից)՝ որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը, հայտնում եմ հետևյալը.

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել է ձեռքբերել խոշոր եղջերավոր կենդանիների ***Pasterella multocida շտամի*** պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված պատվաստանյութ: Մասնակցի կողմից ներկայացված «Ագրովետ» ռուսաստանյան ընկերության կողմից արտադրվող պատվաստանյութի շահագործման հրահանգում (գրանցման համար՝ ПВР-1-2.5/01417) նշված է, որ պատվաստանյութը պատրաստված է ***Pasterella multocida (Պաստերելլա մուլտոցիդա) 078Р և «Коломенский» (Կոլոմենսկիյ) շտամերից:*** Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Ագրովետ» ռուսաստանյան ընկերության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը ներկայացրած գրությունը, համաձայն որի «Коломенский» (Կոլոմենսկիյ) շտամն օժտված է պաշտպանիչ հակածինների (հակագեն) սինթեզման բարձր կարողությամբ և վերջինիս ներդնումը պատվաստանյութի մեջ բարձրացնում է պատվաստանյութի ազդեցության արդյունավետությունը:

Այսպիսով՝ Ա/Ձ Կարեն Հայրյանի կողմից առաջարկվող պատվաստանյութը պարունակում է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրով պահանջվող ***Pasterella multocida (Պաստերելլա մուլտոցիդա)*** շտամը, հետևաբար արձանագրում եմ, որ Մասնակցի կողմից առաջարկվող պատվաստանյութը սույն մասով բավարարում է հրավերի պահանջը: Իսկ ինչ վերաբերում է հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված շտամից բացի այլ շտամի առկայությունը, ապա գտնում եմ, որ Մասնակցի կողմից պահպանված է հրավերով պահանջվող շտամի առկայությունը, ուստի այլ շտամի առկայությունը, որն այն արտադրող կազմակերպության գրության համաձայն, ուղղված է պատվաստանյութի ազդեցության արդյունավետության բարձրացմանը, չի կարող դիտվել որպես հրավերի պահանջին հակասող:

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն բողոքով պնդել է, որ Ա/Ձ Կարեն Հայրյանի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին նաև այն հիմքով, որ Մասնակցի կողմից առաջարկվող պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը +2- +8^0 C է, մինչդեռ հրավերով պահանջվել է +2- +15^0 C:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Ագրովետ» ընկերության արտադրության խոշոր եղջերավոր կենդանիների պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված պատվաստանյութի օգտագործման հրահանգը՝ գրանցված Ռուսաստանի Դաշնության անասնաբուժության և բուսասանիտարիայի հսկողության դաշնային ծառայության կողմից, գրանցման համար՝ ПВР-1-2.5/01417: Նշված հրահանգի համաձայն՝ պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը +2- +8^0 C է: Միևնույն ժամանակ համացանցի համապատասխան էջերում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տվել, որ «Ագրովետ» ընկերության արտադրության ПВР-1-2.5/01417 համարի տակ գրանցված խոշոր եղջերավոր կենդանիների պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված պատվաստանյութի օգտագործման հրահանգում պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը նշված է նաև +2- +15^0 C: Գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել սույն պարամետրի մասով Մասնակցի առաջարկած պատվաստանյութի անհամապատասխանությունը հրավերի պահանջներին, քանի որ պետական գրացման նույն համարի տակ առկա «Ագրովետ» ընկերության արտադրության խոշոր եղջերավոր կենդանիների պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված պատվաստանյութի պահպանման և տեղափոխման համար նախատեսված են երկու տարբեր ջերմաստիճանների միջակայք, որոնցից մեկը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջին:

Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ խոշոր եղջերավոր կենդանիների (Pasterella multocida շտամի) պաստերելյոզի նկատմամբ ինակտիվացված էմուլսացված պատվաստանյութը ***պետք է խառնված լինի Montanide ISA 70 կամ 206 յուղի հավելանյութով:***

Մասնակցի կողմից ներկայացված պատվաստանյութի օգտագործման հրահանգի համաձայն՝ պատվաստանյութը խառնվում է ***հանքային յուղով 40±2% և 10±2% անջուր լանոլինով:***

Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը սույն մասով չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին, քանի որ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է, որ պատվաստանյութը ***պետք է խառնված լինի Montanide ISA 70 կամ 206 յուղի հավելանյութով, իսկ Մասնակցի կողմից ներկայացված պատվաստանյութը խառնվում է հանքային յուղով 40±2% և 10±2% անջուր լանոլինով:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Կարեն Հայրյանի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ պատվաստանյութի խառնուրդի հավելանյութի մասով չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջին: Գտնում եմ, որ սույն մասով բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Ագաստ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ պահանջին, ապա հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի պահանջն՝ «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Ագաստ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ, ենթակա է մերժման, քանի որ նշված լիազորությունը պատկանում է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ սույն բողոքի շրջանակներում քննության առարկա է հանդիսացել Ա/Ձ Կարեն Հայրյանի հայտը, իսկ «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Ագաստ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտը չի քննարկվել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից 24.08.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. պարտավորեցնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ա/Ձ Կարեն Հայրյանին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Ագաստ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ